ՖՐԻԴՐԻԽ ԲԱՐԲԱՐՈՍԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

ԱՂԱԲԵԿՅԱՆ Լ.Ս.

XII դարի երկրորդ կեսին Սրբազան հռոմեական կայսրության (962) արևելյան քաղաքականությունը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է պարզաբանել կայսրության նախորդ շրջանի այն իրողությունները, որոնք այս կամ այն ձևով ներազդում էին Հոհենշտաուֆենների արտաքին քաղաքականության վրա:

Սրբազան կայսրերից Օտտոն Երրորդի (983-1002) քաղաքականության մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում համաքրիստոնեական գաղափարախոսությունը: Նա ձգտում էր վերականգնել նախկին Հռոմեական կայսրությունը՝ որպես համաշխարհային համընդհանրական քրիստոնեական տերություն: Այս գաղափարախոսության նպատակը քրիստոնեություն դավանող ժողովուրդներին մեկ միասնական կառույցի շրջանակում համախմբելն էր: Հնում, որպես այդպիսի համակարգ, հանդես են եկել հելլենիզմը, ապա՝ Հռոմեական կայսրությունը, այնուհետև՝ քրիստոնեությունը՝ իր երկու հոսանքներով (արևմտյան և արևելյան) և Կարլոս Մեծի (768-814) տերությունը: Այժմ այդ գաղափարը ցանկանում էին կենսագործել սրբազան հռոմեական կայսրերը՝ փորձելով համախմբել նախկին Հռոմեական կայսրության տարածքում բնակվող քրիստոնյա ժողովուրդներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սրբազան հռոմեական կայսրությունը նախկին Կարոլինգյան կայսրության իրավահաջորդն էր՝ Օտտոն Երրորդն իրեն համարում էր Կարլոս Մեծի օրինական ժառանգորդը և նրա քաղաքականության շարունակողը[1]:

Պատահական չէ, որ Օտտոնն իրեն համարում էր «առաքյալների ստրուկ» (“Servus Apostolorum”) կամ «Հիսուս Քրիստոսի ստրուկ» (“Servus Jesu Christi”)՝ ի հակադրություն այն բանի, որ բյուզանդական կայսր Կոստանդիանոս Առաջին Մեծը (306-337) իրեն անվանել էր «առաքելահավասար» (“Isapostolos”)[2]: Իրեն անվանելով «Հիսուս Քրիստոսի ստրուկ»՝ Օտտոնը փորձում էր ցույց տալ, որ անձամբ Քրիստոսից է ստացել համաքրիստոնեական կայսրություն ստեղծելու իրավունքը: Այս դեպքում նա կայսրությունն ու քրիստոնեությունը դիտարկում էր որպես միասնական և անբաժանելի համակարգ:

Համընդհանրական քրիստոնեական տերություն ստեղծելու ծրագրի իրագործման ճանապարհին կարևոր էր XI դարում Քրիստոնյա Արևմուտքում շրջանառվող «կայսրության տեղափոխության» գաղափարախոսությունը, ըստ որի՝ կայսրությունը հնարավոր է տեղափոխել ժամանակի և

---

[1] **Ehlers J.** *Die Entstehung des Deutschen Reiches, B. 31, Oldenbourg, 1994, S. 10.*

[2] *Նույն տեղում, էջ 60:*

տարածության մեջ[3]: Այս մտքին կարելի է հանդիպել նաև ավելի ուշ՝ Ֆրիդրիխ Առաջին Բարբարոսայի (1152-1190)՝ Հռոմի սենատին ուղղած նամակում, որտեղ նշված է, որ Իտալիան և Հռոմը նվաճել են, նախ, Կարլոս Մեծը, ապա՝ Օտտոն Առաջինը, ուստի այս տարածքների նկատմամբ օրինական իշխանությունը պատկանում է իրեն՝ որպես սրբազան կայսեր[4]:

Այն, որ համաքրիստոնեական կառույց ստեղծելու գաղափարը հիմնված էր նաև Հռոմեական կայսրության վերաբերյալ արդեն պատմական ավանդույթ դարձած հիշողության վրա, լավ արտացոլված է սրբազան կայսրերի՝ «Հավերժական քաղաքը» որպես միասնության խորհրդանիշ ընդունելու իրողության մեջ: Այսպիսի մտածողության առաջին քայլերից էր Օտտոն Երրորդի՝ Հռոմում՝ Ավենտինյան բլրի վրա, կայսերական պալատի կառուցումը (998), որի ճակատին արձանագրված էր «Սրբազան պալատ»: Օտտոնն իր պալատի կառուցման համար ընտրեց այն տարածքը, որը ժամանակին եղել էր հռոմեական կայսրերի նստավայրը[5]: Ավելին, նա վերջ տվեց նախորդ կայսրերի որդեգրած իտալական քաղաքականությանը: Եթե նրանք արշավում էին Հռոմ, որպեսզի թագադրվեն կայսերական թագով, ապա Օտտոն Երրորդը, ընդհակառակը, ձգտում էր մշտապես ապրել Հռոմում և այնտեղից էր արշավանքներ և շրջագայություններ կազմակերպում դեպի կայսրության տարբեր վայրեր: Այստեղից կարելի է եզրակացնել, որ նա աշխատում էր Հռոմը վերածել կայսրության մշակութաքաղաքական կենտրոնի: Այս ենթատեքստում պարզ է դառնում, որ Հռոմում Օտտոն Երրորդի կառուցած պալատի անվանումը՝ «Սրբազան», ուներ համաքրիստոնեության խորհուրդ[6]:

Պատահական չէ, որ Օտտոն Երրորդն օգնեց, որ նշանավոր գիտնական, վանական Հերբերտն ընտրվի Հռոմի պապ (Սեղբեստրոս Բ՝ 999-1003)[7]: Այս քայլը պայմանավորված էր նաև նրանով, որ վերոնշյալ գաղափարախոսությունը կյանքի կոչելու համար անհրաժեշտ էր հոգևոր իշխանության աջակցությունը: Միջնադարյան քրիստոնեական պատկերացումներում Սեղբեստրոս Ա պապը (314-335) և Կոստանդիանոս կայսրը (306-337) ընկալվում էին որպես քրիստոնեության միասնության խորհրդանիշներ, քանզի այդ ժամանակաշրջանում հոգևոր և աշխարհիկ իշխանության փոխհարաբերություններ-

---

[3] *Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Հռոմեական կայսրությանը (տե՛ս* **Boshof E.,** *Europa im 12. Jahrhundert: auf dem Weg in die Moderne, Stuttgart, 2007, S. 65):*

[4] **Колесницкий Н**. *"Священная Римская империя", притязания и действительность, М., 1977, с. 66.*

[5] **Бульст-Тиле М. Л., Йордан К., Флекенштейн Й.** *Священная Римская империя: эпоха становления, СПб., 2008, с. 12.*

[6] *Miscellanea Mediaevalia, B. 6, Lex et Sacramentum im Mittelalter, herausgegeben von P. Wilpert, Berlin, 1969, S. 189.*

[7] *Նորընտիր պապն ընդունեց Սեղբեստրոս անունը՝ ի պատիվ Հռոմի Սեղբեստրոս Ա պապի, որը եղել է Կոստանդիանոս Մեծ կայսեր խորհրդականը:*

րում գերադասության խնդիր չկար. կայսերական իշխանությունը ընկալվում էր որպես առաջնային:

Պատահական չէ, որ օտտոնյան դարաշրջանի մշակույթում փորձեր էին արվում վերականգնել և տարածել դասական լատիներենը՝ որպես քրիստոնեական եկեղեցու միասնության հիմքերից մեկը:

Համաքրիստոնեական գաղափարախոսությունը պետք է ներառեր նաև քրիստոնյա Արևելքը, որը որոշակի խնդիրներ կառաջացներ Բյուզանդիայի[8] հետ: Բյուզանդիայի հետ հարաբերությունները գործնական հիմքերի վրա դնելու համար Օտտոն Առաջինը որոշեց իր որդուն (ապագա կայսր Օտտոն Երկրորդ) ամուսնացնել Բյուզանդիայի կայսր Ռոմանոս Երկրորդի (959-963) դստեր՝ Աննայի հետ, սակայն այս քաղաքական ամուսնությունը չկայացավ: Հետագայում (972թ.) Բյուզանդիայի նոր կայսր Հովհաննես Չմշկիկը (969-976) համաձայնվեց, որ Օտտոնն ամուսնանա իր ազգականուհի Թեոֆանեի հետ, իսկ դրա փոխարեն գերմանական կայսրը հրաժարվեց իտալական Ապուլիա երկրամասից՝ հօգուտ Բյուզանդիայի:

Թեոֆանեն (972-991) վարում էր բավական գործուն քաղաքականություն թե՛ երկրի ներքին կյանքում, թե՛ արտաքին քաղաքականության մեջ: Նա փաստաթղթեր էր ստորագրում որպես «Թեոֆանե՝ կայսրուհի՝ Աստծո բարեհաճությամբ» կամ նույնիսկ՝ «Թեոֆանիուս՝ Աստծո բարեհաճությամբ կայսր»[9]: Այսինքն՝ նա, դառնալով կայսրուհի, իրեն նվիրել էր սրբազան կայսրերի քաղաքականության կենսագործմանը:

Ուշագրավ է նաև Օտտոն Երրորդի կնիքի մակագրության փոփոխությունը, որ տեղի ունեցավ նրա՝ Հռոմում թագադրվելուց հետո: 996թ. նա արշավեց Հռոմ՝ կայսերական թագով թագադրվելու համար: Հռոմի պապ Գրիգորիոս Ե-ն (996-999) նրան թագադրեց, որից հետո Օտտոնը ստացավ «Հռոմեացիների օգոստոսափառ կայսր» տիտղոսը: Սովորաբար Օտտոնը փաստաթղթերի վրա մոմե կնիքի փոխարեն կախում էր կապարե կնիք, որի մի երեսին Կարլոս Մեծի դիմապատկերն էր, իսկ մյուսին գրված էր՝ «Հռոմեական կայսրության վերածնունդ»: Նոր կնիքի մի երեսին պատկերված էր անձամբ Օտտոն Երրորդը, մյուսին մակագրված էր՝ «Ոսկե Հռոմ»[10]: Եթե նախկինում Օտտոն Երրորդն իրեն համարում էր միայն Կարլոս Մեծի քաղաքականության (վերականգնել և պահպանել Արևմտյան հռոմեական կայսրությունը) շարունակողը, ապա այժմ, պահպանելով այդ ավանդույթը, նա փորձում էր այն դարձնել ընդհանրական:

Ավելի ուշ Հռոմի պապ Սեղբեստրոս Բ-ին տարածքներ նվիրելու մասին փաստաթղթում Օտտոն Երրորդը ևս մեկ անգամ փաստում է, որ Հռոմը աշխարհի մայրաքաղաքն է, Հռոմի եկեղեցին՝ բոլոր եկեղեցիների մայրը, իսկ ինքը՝ «հռոմեական կայսրը», Հռոմի տերն է: Հոգևոր և աշխարհիկ իշխանութ-

---

[8] *Ժամանակակից միջնադարագիտության մեջ Բյուզանդիան ավելի հաճախ անվանվում է Արևելյան Հռոմ:*

[9] **Колесницкий Н.,** *նշվ. աշխ., էջ 24:*

[10] **Ehlers J.**, *նշվ. աշխ., էջ 22:*

յունների փոխհարաբերությունների տեսանկյունից առավել հետաքրքիր է փաստաթղթի այս հատվածը. «Պարոն Մեղբեստրոսին՝ մեր ուսուցչին, ընտրում և Աստծո կամքը նշանակում ենք Սրբազույն պապ: Ամբողջ իշխանությունը Հռոմում և Հռոմի մարզում պետք է բխի կայսրից, իսկ պապը հանդես է գալու որպես նրա հավատարիմ օգնական»[11]: Այսպիսով, Օտտոն Երրորդը հեռանում էր կայսեր և պապականության փոխհարաբերությունների մասին մինչ այդ ընդունված պատկերացումից, ըստ որի, քրիստոնեությունը պաշտպանելու համար Աստված երկրային թագավորությանը հանձնել է երկու թուր՝ պապին՝ հոգևոր, իսկ կայսերը՝ աշխարհիկ: Ընդ որում, պապը պատկերվում էր սպիտակ ձիուն նստած, իսկ կայսրը՝ նրա ձիու սանձից բռնած: Դա նշանակում էր, որ նա, ով կընդդիմանա պապին և չի դատապարտվի հոգևոր դատարանում, կդատապարտվի աշխարհիկ դատարանում կայսեր կողմից՝ պապին չենթարկվելու համար[12]:

Օտտոն Երրորդի՝ հռոմեական կայսրերի ժառանգորդը դառնալու և բյուզանդական կայսերը հավասար, նույնիսկ ավելի բարձր դիրքի հասնելու ձգտումը դժգոհության ալիք բարձրացրեց պապական արքունիքում և Հռոմի ազնվականության շրջանում: Նման արձագանքը պայմանավորված էր նրանով, որ քրիստոնեության ընդունումից հետո հռոմեական կայսրերը, թեկուզև միանձնյա էին կառավարում երկիրը, սակայն կարևոր հարցերում խորհրդակցում էին հոգևոր իշխանության և ազնվականության հետ, իսկ անհրաժեշտության դեպքում հենվում էին նաև նրանց աջակցության վրա: Կայսրերն ավելի ու ավելի էին ընդգծում սրբազան իշխանությունը յուրացնելու իրենց ձգտումը: Դա էր պատճառը, որ պապականությունը և Հռոմի սենատն Օտտոն Երրորդի կայսրությունն սկսեցին դիտարկել ոչ թե որպես հռոմեական, այլ՝ «տեվտոնական», այսինքն՝ զուտ գերմանական ժողովրդի կամքի արտահայտիչ: Դրան հակադրում էին «իսկական հռոմեականը□՝ ի դեմս Արևելյան Հռոմի: Վերջինս, նրանց կարծիքով, միակն էր, որ իրավունք ուներ հանդես գալ որպես հռոմեական կայսրության իրավահաջորդ: Ավելին, Սրբազան Հռոմեական կայսրության նկատմամբ ձևավորված այս մոտեցումը պապականությունը փորձում էր հիմնավորել «Հավերժական քաղաքի» նկատմամբ բացարձակ իշխանություն տվող «Կոստանդիանոսի պարգևի» օգնությամբ[13]: Պատահական չէ, որ բյուզանդական իրավաքաղաքական մտքի շրջանակներում հոլովվող՝ «Կոստանդնուպոլիսը՝ որպես երկրորդ Հռոմ» գաղափարաբանությունը երբեմն շրջանառության մեջ էր դրվում պապականության արքունիքում՝ ի հակադրություն գերմանական կայսրերի քաղաքականության:

---

[11] *Այս մասին առավել մանրամասն տե՛ս Miscellanea Mediaevalia, B. 6, S. 11.*

[12] *Այս տեսության մասին մանրամասն տե՛ս Саксонское зерцало, под. ред. Корецкого В. М., М., 1985, с. 16.*

[13] *Այդ փաստաթղթի համաձայն, Կոստանդիանոս Մեծը Հռոմի Մեղբեստրոս Առաջին պապին է հանձնել հոգևոր և աշխարհիկ իշխանությունը «արևմտյան երկրամասերում», ինչպես նաև օժտել է կայսերական արժանիքներով (տե՛ս Boshof E., նշվ. աշխ., էջ 64:):*

Սաքսոնական արքայատոհմին հաջորդած Հոհենշտաուֆենները (Շտաուֆեն՝ 1138-1254) որոշակի փոփոխություններ մտցրին համաքրիստոնեական կառույց ստեղծելու՝ գերմանական կայսրերի մինչ այդ որդեգրած սկզբունքների մեջ: Այդ շրջադարձը նկատելի էր դեռևս Կոնրադ Երրորդի կառավարման տարիներին (1138-1152): Գերմանական կայսրը քաջ գիտակցում էր, որ միայն Հռոմի նկատմամբ գերիշխանության հաստատումը բավարար չէ այդ գաղափարը կյանքի կոչելու համար, առավել ևս, որ դրան ավելի ու ավելի էին խոչընդոտում պապականությունը, Հռոմի ազնվականությունը, ինչպես նաև Հյուսիսային Իտալիայի առանձին քաղաքներ: Շտաուֆենները հարկադրված էին կայսրության արտաքին քաղաքականության համակարգում ներառել նաև Արևելքը: Զարմանալի չէ, որ Կոնրադ Երրորդը գերմանական թագավորներից առաջինն էր, որը ոչ մի արշավանք չկազմակերպեց դեպի Իտալիա, չթագադրվեց կայսերական թագով, սակայն ղեկավարեց գերմանացիների մասնակցությունը խաչակրաց երկրորդ արշավանքին (1147-1149)[14]:

Կոնրադ Երրորդին հաջորդած Ֆրիդրիխ Առաջին Բարբարոսան շարունակեց նրա խաչակրաց քաղաքականությունը: Նա առաջին կայսրն էր, որ փորձեց մեկ համակարգի մեջ միավորել Օտտոների իտալական և Կոնրադ Երրորդի արևելյան քաղաքականությունը՝ որպես համաքրիստոնեականությունը կենսագործելու միջոց: Այդ ծրագրի իրագործման համար Ֆրիդրիխ Առաջինը նախատեսում էր նախ և առաջ հաստատվել Իտալիայում և այն դարձնել կայսրության տնտեսական, քաղաքական և մշակութային կենտրոն, քանի որ բուն Գերմանիան այդ ժամանակ զարգացման իտալական աստիճանին չէր հասել: Սկզբում նա փորձեց Իտալիայում հաստատվել խաղաղ ճանապարհով:

Այսպես, 1153թ. Եվգենիոս Գ-ի (1145-1153) և Ֆրիդրիխի միջև գերմանական Կոնստանց քաղաքում կնքվեց պայմանագիր, որը պետք է նախապատրաստեր Ֆրիդրիխի կայսերական թագադրությունը Հռոմում[15]: Սակայն ձեռք բերված պայմանավորվածությունները չկատարվեցին, քանզի Ֆրիդրիխը հրաժարվեց ընդունել պապին՝ որպես սենյորի և նրա մոտ ազնվականական ծառայության անցնել: Սակայն նոր պապ Ադրիանոս Դ-ն (1154-1159) կարողա-

---

[14] *Հռոմեական հանրապետության սենատը կայսերական թագ առաջարկեց Կոնրադ Երրորդին, երբ վերջինս խաչակրաց արշավանքից վերադառնալու ճանապարհին կանգ առավ Իտալիայում (1149թ.), սակայն Կոնրադը մերժեց այս առաջարկը՝ չցանկանալով «սրբազան» թագը ստանալ աշխարհիկ իշխանությունից: Այստեղ գուցե դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ թագավորը խուսափեց պապականության հետ հնարավոր տարաձայնություններից (տե՛ս* **Mayer H. E.** *Geschichte der KreuzzƀGe, Stuttgart, Berlin, KΦln, 1989, S. 97):*

[15] **NΦrenberg H.** *Darstellung Friedrich Barbarossas in den Gesten Ottos von Freising, SwinemƀNde, 1917, S. 92.*

ցավ հարթել տարաձայնությունները, և 1155թ. հունիսի 18-ին Բարբարոսան թագադրվեց կայսերական թագով[16]*:*

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Հռոմի պապի և Ֆրիդրիխ Բարբարոսայի միջև հարաբերությունների փոխզիջումային բնույթը ժամանակավոր էր: Թագադրվելուց շատ չանցած՝ Ֆրիդրիխը ձեռնամուխ եղավ իր քաղաքական ծրագրի հաջորդ մասին՝ Իտալիայի նվաճմանը: Դա չէր տեղավորվում պապականության քաղաքական հաշվարկներում, քանի որ կայսերական թագով թագադրելը առաջին հերթին նպատակամիտված էր Ֆրիդրիխին խաչակրաց շարժման մեջ ներգրավելուն:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում ձևավորված իրավիճակում կայսրության և պապականության քաղաքականությունը նույնաբնույթ հետաքրքրությունների եզրեր չգտավ, քանի որ պապական արքունիքում ևս մշակվել էր քրիստոնեական համընդհանրության գաղափարախոսություն, բայց այս դեպքում՝ հոգևոր իշխանության գերագահության ներքո:

Նման իրավիճակում կողմերի միջև սկսվեց գաղափարական սուր պայքար, որը շուտով վերածվեց բացահայտ առճակատման[17]*:*

Այդ պայքարում իր հավակնությունները հիմնավորելու համար Շիկամորուսը հաճախ դիմում էր նաև հոգևոր միջավայրում ձևավորված մտքերին: Նրա ստորագրած փաստաթղթերում հաճախ էին հիշատակվում Պետրոս առաքյալի հայտնի խոսքերը. «Փա՛ռք տվեք Աստծուն, վախեցե՛ք կայսրից»[18]*: Այսպիսով, Ֆրիդրիխն իրեն նախորդած կայսրերի նման փորձում էր յուրացնել սրբազան իշխանության որոշ հատկանիշներ: Պահպանվել է նրա՝ Հռոմում արտասանած հետևյալ միտքը. «Չե՞ս ուզում իմանալ քո Հռոմի իրական փառքի, սենատորական պատվի, զորքի կարգուկանոնի, ասպետների կազմակերպվածության և դիմացկունության մասին, երբ նրանք մտնում են մարտի մեջ: Նայի՛ր մեր երկրին: Այս ամենը մեզ փոխանցվել է կայսերական իշխանության հետ: Կայսերական գաղափարախոսությունը մեզ մերկ չի տրվել: Այն մեզ է անցել՝ ուժով և գեղեցկությամբ պարուրված: Ձեր կոնսուլները և ձեր սենատն այժմ մեզ հետ են: Եվ մեզ հետ է զորքը»*[19]*:*

---

[16] *Այս մասին առավել մանրամասն տե՛ս* Hallam H., Borghers A., Dudouit P. *L'Europe au moyen Թge, Bruxelles, 1840 p. 61,* GՓrich K. *Die Staufer, Herrscher und Reich, MՖnchen, 2006, S. 45.*

[17] *«Հռոմեական կայսրն իշխում է Աստծո կամքը: Նա կլիներ ընդամենը Աստծո ստվերը, եթե չլիներ Հռոմի տերը»: Խոսքը Սրբազան հռոմեական կայսեր*
մասին է:

[18] *Պատահական չէ, որ կայսրության «Սրբազան» (sacrum) անվանումն ավելի հաճախ օգտագործել է Ֆրիդրիխ Առաջինը: (տե՛ս* Kern F. *Heiliges RՓmisches Reich Deutscher Nation. Eine Studie Ֆber den Reichstitel by Karl Zeumer (Historische Zeitschrift, B. 107, H. 3 (1911), S. 606).*

[19] Вис Э. В., *Фридрих II Гогенштауфен, М., 2005, с. 13.*

1165թ. սեպտեմբերի 29-ին Ֆրիդրիխ Բարբարոսան կատարեց մի քայլ, որի խորհուրդն ինքնին ավելին էր, քան խոսքերը: Կազմակերպված արարողություններից մեկի ժամանակ նա իրեն ներկայացրեց որպես Կարլոս Մեծ և ներկաներից պահանջեց այսուհետև իրեն կոչել «Կարլոս Մեծ»[20]: Ստեղծված պայմաններում նա հասկացել էր, որ Իտալիան կայսրության տնտեսական, քաղաքական և մշակութային կենտրոն դարձնելու ծրագիրը խաղաղ ճանապարհով հնարավոր չէ իրագործել:

Կայսրության, մյուս կողմից, պապականության և Հյուսիսային Իտալիայի քաղաքների դաշնակցության (Լոմբարդական լիգա) միջև ընթացող պատերազմն ի վերջո ավարտվեց Ֆրիդրիխի պարտությամբ: Դրա շնորհիվ 1177թ. Վենետիկում հաստատվեց զինադադար, որը հերթական փորձն էր՝ հարթելու կողմերի միջև առկա տարաձայնությունները: Չնայած այն բանին, որ Վենետիկի Սուրբ Մարկոս եկեղեցում կայսրը ծնկի իջավ Ալեքսանդրոս Գ պապի առջև (1159-1181), ինչպես նաև մի շարք տարածքային զիջումներ կատարեց «Ս. Պետրոսի աթոռին», Վենետիկը չդարձավ «երկրորդ Կանոսսա»[21]: Վենետիկյան տեսակցությունը եկեղեցում նախատեսել էր Ֆրիդրիխ Բարբարոսան, որպեսզի պապի հետ հանդիպման արարողությունը հասարակական մեծ հնչեղություն չստանա, քանզի դա կազդեր իր հեղինակության վրա:

Ֆրիդրիխը բավարարվեց Վենետիկի զինադադարով ձեռք բերված պայմաններով, քանի որ ստեղծված իրավիճակում ինքն Իտալիայում այլևս անելիք չուներ և գիտակցաբար հայացքն ուղղեց դեպի Արևելք: 1184թ. հուլիսի 22-ին Վերոնայում հանդիպեցին Ֆրիդրիխ Առաջինը և Լուցիոս Գ պապը (1181-1185)[22]: Կողմերը քննարկեցին՝ ա) խաչակրաց նոր արշավանքը կազմակերպելու խնդիրը, բ) արքայազն Հենրիխին՝ որպես Ֆրիդրիխի գահակից թագադրելու հարցը: Սակայն բանակցությունների ընթացքի վրա բացասական ազդեցություն ունեցավ հոկտեմբերի 29-ին Աուգսբուրգում կայացած՝ Հենրիխի և Սիցիլիայի թագավոր Վիլհելմ Երկրորդի (1166-1189) հորաքրոջ՝ Կոնստան-

---

[20] *Մանրամասն տե՛ս* **Papp Ф**. *Священная Римская империя германской нации, СПб., 2009, с. 189:*

[21] *Պապականության և Սրբազան Հռոմեական կայսրության միջև գերագահության համար մղվող պայքարի դրսևորումներից, երբ Գրիգորիս Է պապը (1073-1085) հաղթանակ տարավ Հենրիխ Չորրորդ (1054-1105) կայսեր նկատմամբ և բանադրանքի ենթարկեց նրան: Վերջինս 1077 թ. ստիպված մեկնեց Հյուսիսային Իտալիայի Կանոսսա ամրոց, որտեղ գտնվում էր պապը, և իր հավատարմությունը հայտնեց նրան: Կանոսսայից հետո կայսեր և պապի պայքարը գերագահության համար նոր ընթացք ստացավ (տե՛ս* **Schwarz J.** *Das europПische Mittelalter, B. 2, Stuttgart, 2006, S. 34):*

[22] **Halfter P**. *Die Staufer und Armenien. Von Schwaben bis Jerusalem. Facetten staufischer Geschichte (VerФffentlichungen des Alemannischen Instituts 61), Sigmaringen, 1995, S. 19).*

ցիայի[23] նշանադրության արարողությունը, քանի որ այն տեղի էր ունեցել առանց պապի իմացության և օրհնության[24]:

Չնայած այս հանգամանքին՝ 1186 թ. հունվարի 27-ին Միլանում տեղի ունեցավ գերմանական արքայազն Հենրիխի (ապագա կայսր Հենրիխ Վեցերորդի (1190-1197)) և Կոնստանցիայի ամուսնության արարողությունը: Ուշագրավ է, որ պսակադրության ծեսը կատարեց Աքվիլեայի պատրիարքը, քանզի կայսրը չցանկացավ դիմել Հռոմի պապին: Արարողության ժամանակ Հենրիխը նաև թագադրվեց որպես Իտալիայի թագավոր և հոր կողմից ստացավ կեսարի կոչում: Այս քաղաքական ամուսնությունը կայսեր խոշորագույն դիվանագիտական հաղթանակներից էր[25]: Խնամիական կապեր հաստատելով սիցիլիական արքունիքի հետ՝ կայսրը ոչ միայն դեպի Արևելք արշավանքի նախօրեին իր թիկունքում ձեռք էր բերում ամուր հենարան, այլև փորձում էր տիրանալ սիցիլիական թագին և «թագավորությունը միավորել կայսրության հետ»[26]: Այս ծրագիրը որոշակի վտանգ էր պարունակում նաև Բյուզանդիայի համար, քանզի Սիցիլիական թագավորությունը լուրջ հակամարտության մեջ էր գտնվում Արևելյան Հռոմի հետ[27]:

Այն, որ սրբազան կայսրերի՝ միասնական քրիստոնեական կառույց ստեղծելու ծրագրի իրագործումն անխուսափելիորեն առնչվում էր նաև Արևելքի քրիստոնյա միջավայրի հետ, դրսևորվում էր անգամ կայսերական թագի կառուցվածքի մեջ: Օտտոն Առաջինի թագադրությունից (962) ի վեր կիրառվող այդ թագը բաղկացած էր իրար ագուցված երկու քառակուսիներից, որոնք ստանում էին ութաթև աստղի տեսք[28]: Երկու քառակուսին միջնադարի գի-

---

[23] Կոստանցիան Սիցիլիայի թագավոր Ռոջեր Երկրորդի (1130-1154) դուստրն էր: Այն բանից հետո, երբ Սիցիլիայի թագավոր Վիլհելմ Երրորդը հրաժարվեց գահից, Կոնստանցիան դարձավ սիցիլիական թագի միակ օրինական ժառանգորդուհին: Նրա միջոցով ժառանգելով այս թագավորության թագը՝ Հենրիխ Վեցերորդը 1194թ. դեկտեմբերի 25-ին Պալերմոյում թագադրվեց որպես սիցիլիական վեցերորդ թագավոր՝ **Հենրիխ Առաջին** անունով:

[24] **Boshof E**., նշվ. աշխ., էջ 55:

[25] **Görich K.,** նշվ. աշխ., էջ 69:

[26] **Boshof E**., նշվ. աշխ., էջ 55:

[27] Նույն տեղում, էջ 56: Հետաքրքիր է, որ դեռևս XII դ. 60-ական թվականներին Հունգարիայում սկսված գահակալական կռիվներից փորձեցին օգտվել Սրբազան կայսրությունը և Բյուզանդիան, որոնցից յուրաքանչյուրը աշխատում էր իր գերիշխանությունը հաստատել այդ տարածաշրջանում: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Schobesberger N.** *Die Staufer und Bysanz. Die staufische Bysanzpolitik von Konrad III. bis Philipp von Schwaben, Wien, 2008, S. 99:*

[28] Միջնադարյան գիտակցության մեջ ութաթև կամ Բեթղեհեմի աստղը ընկալվում էր որպես Հիսուս Քրիստոսի ծննդյան խորհրդանիշ: Հետաքրքիր է, որ լոմբարդական թագը (որով թագադրվում էին նաև սրբազան կայսրերը) ընդելուզված էր երկաթե ժապավենով: Ըստ ավանդույթի, դրա համար հիմք էր

տակցության մեջ խորհրդանշում էին երկու սրբազան քաղաքները՝ Երուսաղեմը և Հռոմը: Դրանցից առաջինը ներկայանում էր որպես ապագայի քաղաք, իսկ երկրորդը՝ ներկայի: Հասկանալի է, որ կայսրերի՝ քրիստոնեական միավորված միջավայր ստեղծելու ծրագրում Երուսաղեմն ընկալվում էր որպես այդ միջավայրի կենտրոն: Շտաուֆեն կայսրերի պատկերացմամբ՝ Սրբազան հռոմեական կայսրությունը երկրային վերջին կայսրությունն էր, որի շրջանակում պետք է տեղի ունենային քրիստոնյա աշխարհի միավորումը և մարդկության վերջնական փրկությունը: Իրենց առաքելությունն այս գաղափարի իրագործմանը նվիրած կայսրերը նաև պատասխանատվություն էին ստանձնել՝ լինել քրիստոնյա աշխարհի անցյալն ու ապագան միավորող շղթայի կարևորագույն օղակը[29]*: Այսպես. Ֆրիդրիխը, Աստծո կողմից իրեն շնորհված կայսերական իշխանության գաղափարներով համակված, կառավարման վերջին շրջանում իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրեց խաչակրաց երրորդ արշավանքին: Պարզ է, որ այս քաղաքականությունը հանգեցնելու էր Արևելյան Հռոմի հետ հարաբերությունների սրմանը:*

Զարմանալի չէ, որ Ֆրիդրիխ Բարբարոսան Բյուզանդական կայսրությունն անվանել է "Փոքրիկ Հունաստան"՝ փաստորեն շեշտելով, որ ոչ թե Բյուզանդիան, այլ Սրբազան հռոմեական կայսրությունը պետք է իր վրա վերցնի նախկին Հռոմեական կայսրության երբեմնի հզորությունն ու փառքը վերականգնողի, ինչպես նաև նրա բնակչությանը համախմբելու առաքելությունը[30]*: Իր կողմից, արևելահռոմեական կայսր Իսահակը (1185-1195) խաչակրաց երրորդ արշավանքի նախօրեին Ֆրիդրիխին ուղղած նամակում նրան անվանում էր «Ալեմանիայի թագավոր», իսկ իրեն՝ «հռոմեական կայսր»*[31]*՝ դրանով շարունակելով զարգացնել պապականության առաջ քաշած այն գաղափարը, ըստ որի, Սրբազան հռոմեական կայսրությունը ընդամենը գերմանական ժողովրդի կամքի դրսևորում է և ոչ ավելին: Սակայն Ֆրիդրիխը չէր համակերպվում կայսրության նման կարգավիճակի հետ:*

Հող նախապատրաստելով իր արևելյան քաղաքականության իրականացման համար՝ կայսրն ամբողջ ուշադրությունը կենտրոնացրեց խաչակրաց նոր արշավանքին իր մասնակցության վրա: Արշավանքի հաջող ընթացքի պարագայում կայսրությունն իր քաղաքական ազդեցությունը կտարածեր Արևելքի քրիստոնեական միջավայրում: Արշավանքի նախօրեին անհրաժեշտություն էր առաջանում ոչ միայն հստակեցնել կայսրության դիրքորոշումը Բյուզանդիայի նկատմամբ, այլև դիվանագիտական հարաբերություններ հաստատել Մերձավոր Արևելքի քրիստոնյա պետությունների, այդ թվում նաև Կիլիկյան Հայաստանի հետ: Վերջինս Արևելքի մահմեդական ուժերի մեջ (Եգիպտոսի

ծառայել Քրիստոսի խաչելության ժամանակ օգտագործած մեխերից մեկը (տե՛ս Низовский А. Ю. *Реликвии Священной Римской империи германской нации, М., 2011, с. 8):*

[29] Рапп Ф., *նշվ. աշխ, էջ 140:*

[30] Заборов М. А. *Крестовые походы, М., 1956, с. 165.*

[31] Васильев А. *История Византийской империи, СПб., 2000, с. 679.*

Այյուբյան սուլթանություն, Ռումի սելջուկյան սուլթանություն) կարող էր դառնալ ամուր քրիստոնեական հենարան՝ Ֆրիդրիխի քաղաքական ծրագիրը կյանքի կոչելու ճանապարհին: Սա էր պատճառը, որ 1189թ. կայսրն իր ողջ ուշադրությունը բևեռեց խաչակրաց արշավանքին իր մասնակցության վրա:

ИДЕОЛОГИЧЕСКИЕ КОРНИ ВОСТОЧНОЙ ПОЛИТИКИ ФРИДРИХА БАРБАРОССЫ

АГАБЕКЯН Л.С.

Резюме

Начиная с правления Оттона Третьего в политике Священной Римской империи важное место занимала общехристианская идеология, целью которой было объединение народов, исповедующих христианство, в рамках единой структуры. Общехристианская направленность политики священных императоров имела место и при Фридрихе Барбароссе. Для претворения в жизнь общехристианской политики необходимо было вовлечь страны христианского Востока во внешнюю политику империи.

THE IDEOLOGICAL SOURCES OF FREDERICK BARBAROSSA'S EASTERN POLICY

L. AGHABEKIAN

Abstract

Since the reign of Otto the Third, the Christian ideology has occupied an important place in the politics of Holy Roman Empire. It sought to bring together professing Christians in common structure. This pro-Christian policy of Holy Emperors lasted until the times of Frederick Barbarossa. The mentioned strategy required the engagement of the Christian countries in the East in the foreign policy of the Empire.